ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

## 18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ, N 107-Ա

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՆՈՂ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-088-0088-0038 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21) ենթակետով, 35-րդ հոդվածի 1-ին կետի 16) և 18) ենթակետերով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետի 2) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի 14-րդ կետի ա) ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի 02/02/2023թ. N 01/112,3/00725-2023 գրությունը, համայնքի սեփականության իրավունքի N 26072023-06-0071 վկայականը (գաղտնաբառ՝ SSYGXNNBLSIB) համայնքի ղեկավարի առաջարկությունը

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, գյուղ Շնող, 3-րդ փողոց, 1/3 հասցեում գտնվող, 06-088-0088-0038 կադաստրային ծածկագրով, 0.01784 հեկտար մակերեսով հողամաս անհատույց օգտագործման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել «Սիմոնյան» կրթական հիմնադրամին «Թումոն տուփի մեջ» նոր կենտրոն հիմնելու նպատակով:
2. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի հետ կնքել հողամասի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՉԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԱՄՐԱՍՏԱՆ | ՋԱՆԻՆՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2023թ., դեկտեմբերի 18,
Լոռու մարզ, ք. Ալավերդի